ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
Հեռ. +374 10 515704, Վեբ կայք՝ www.gov.am

Ա/Ա-03/28 03.06.2020թ.

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանին,

Իզաբելլա Սարգսյանին

Հարգելի տիկին Դոյդոյան և տիկին Սարգսյան,

Ի պատասխան Ձեր՝ 25.05.2020թ. 345-45 հարցման (ստացված 26.05.2020թ.)՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարությունը «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի հիման վրա նոր տիպի կորոնավիրուսի տարածման կանխարգելման և արագ բացահայտման նպատակով գործարկել է հատուկ ծրագրային ավտոմատացված համակարգ: Համակարգը ստեղծվել է հայ կամավոր ծրագրավորողների կողմից և օգտագործվում է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2020 թ. թիվ 298-Ն որոշմամբ նախատեսված մարմինների կողմից՝ Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքով և որոշմամբ սահմանված նպատակներով:

Տեղեկացնում ենք, որ ծրագրային ապահովումը ձեռք չի բերվել որևէ ընթացակարգով գնման արդյունքում, այն կամավոր և անհատույց որպես նվիրատվություն մշակել և տրամադրել են անհատ ծրագրավորողներ: Ըստ այդմ, ծրագրավորողների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով չեն ստացվել կամ ձևավորվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով տեղեկություն համարվող տվյալներ: Միաժամանակ, ծրագրավորողները չեն ցանկացել, որ իրենց

անունները հրապարակվեն, չեն համաձայնել, որ իրենց կողմից անվարձահատույց օժանդակության փաստը հանրայնացվի:

Վերոնշյալից ելնելով և հաշվի առնելով, որ մի կողմից օրենքով նախատեսված չէ ծրագրավորողների մասին տվյալների հավաքագրումը, պահպանումը և հրապարակումը, մյուս կողմից առկա չէ հրապարակման վերաբերյալ նրանց համաձայնություն՝ վերջինների մասին տվյալները չեն կարող տրամադրվել:

Հարգանքով՝ Սերժ Վարագ Սիսեռյան

Կատարող՝ Վ. Հունանյան,
ՀՀ փոխվարչապետի մամուլի քարտուղար
Հեռ.՝ (010) 51-56-58